ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ֆիզկուլտուրայի հրահանգչի, դաստիարակի, հոգեբանի, լոգոպեդի և հատուկ մանկավարժի թափուր տեղերի մրցույթի հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ «Երևանի հ.152 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի ***<u>Ֆիզհրահանգչի</u>*** (***<u>0,50 դրույք), դաստիարակի</u>*** (***<u>0,50 դրույք), հոգեբանի (0,75 դրույք), լոգոպեդի (0,75 դրույք) և հատուկ մանկավարժի</u>*** (***<u>0,50 դրույք)</u>*** թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել

-դիմում (Ձև 1)

-կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ)

-անձը հաստատող փաստաթուղթ

-աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում)

-ինքնակենսագրություն (Ձև4)

-մեկ լուսանկար 3×4 չափի

-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ

-ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական.

-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և վերադարձնում բնօրինակները: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել թերությունները և համալրել փաստաթղթերի ցանկը:

Փաստաթղթերն ընդունվում են 2024թ. մայիսի 17-ից մինչև հունիսի 14-ը, ամեն օր՝ ժամը 10:00-17:00, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2024թ. հունիսի 21-ին՝ ժամը 11:00-ին, «Երևանի հ.152 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում, հասցեն՝ ք.Երևան, Ազատության 4ա: Տեղեկությունների համար զանգահարել (010) 204 480 հեռախոսահամարով:
Կատարող Ն.Ստեփանյան, հեռ՝. 011518841: